Ինչ է պետք իմանալ մաբթերայի® մասին

Մաբթերա ստացող հիվանդների համար կարևոր տեղեկություն

- ☐ Այս գրքույկը պարունակում է միայն անվտանգության վերաբերյալ կարևոր տեղեկություն
- ☐ Կողմնակի ազդեցության վերաբերյալ հավելյալ տեղեկության համար կարող եք կարդալ մաբթերա դեղի ներդիր թերթիկը

Գրքույկի մասին

Այս գրկույկի տեղեկությունը նախատեսված է այն հիվանդների համար, որոնք ստանում են մաբթերա ռևմատոիդ արթրիտի, պոլիանգիիտի հետ ընթացող գրանուլոմատազի կամ միկրոսկոպիկ պոլիանգիիտի բուժման համար: Խնդրում ենք ուշադիր կարդալ գրքույկը՝ դա կարևոր է, քանի որ Դուք պետք է իմանաք մաբթերա դեղի օգտագործման ժամանակ օգուտի և վտանգների մասին:

Այս գրքույկը կարող է.

- Պատասխանել Ձեր այն հարցերին, որոնք վերաբերվում են մաբթերայի պոտենցիալ վտանգներին: Այն կօգնի Ձեզ և Ձեր բժշկին հասկանալ արդյոք ճիշտ բուժում է նշանակված
- Կպատմի Ձեզ մաբթերայի մասին
- Կպատմի այն ամենը, ինչը պետք է իմանալ մինչև մաբթերայի ներարկումը
- Կպատմի Ձեզ մաբթերայի կողմնակի ազդեցությունների մասին, որոնք Դուք պետք է իմանաք: Այն վերաբերվում է հազվադեպ հանդիպող, բայց լուրջ գլխուղեղի վարակին, որը կոչվում է պրոգրեսիվող մուլտիֆոկալ լեյկոէնցեֆալոպաթիա (ՊՄԼ)
- Կպատմի Ձեզ այդ հիվանդության նշանների մասին
- Կպատմի Ձեզ թե ի՞նչ անել, եթե Ձեզ մոտ զարգանա վարակ կամ ՊՄԼ
- Կպատմի Ձեզ հիվանդի տեղեկատվական քարտի մասին

Ինչ է պետք իմանալ մաբթերայի մասին

Մաբթերան ազդում է Ձեր իմունային համակարգի վրա, դարձնում է Ձեզ ավելի զգայուն վարակի նկատմամբ: Որոշակի վարակներ կարող են լինել ծանր և պահանջեն բուժում:

Ինչի համար է օգտագործվում մաբթերան

Մաբթերան օգտագործվում է այն հիվանդների բուժման համար, որոնք ունեն

- **Սուր ռևմատոիդ արթրիտ (ՌԱ)**՝ երբ նախորդ այլ դեղերով բուժումը արդյունավետ չի եղել, ներկայումս արդյունք չի տալիս կամ բուժման հետևանքով զարգացել է կողմնակի ազդեցություն: Սովորաբար այն նշանակում են մեթոտրեքսատի հետ:
- **Պոլիանգիիտով ընթացող գրանուլոմատոզ (GPA կամ Վագների գրանուլոմատոզ) կամ միկրոսկոպիկ պոլիանգիիտ (MPA)**՝ հիվանդության նշանները և ախտանիշները նվազեցնելու կամ կանխելու համար: Սովորաբար այն նշանակում են ստերոիդների հետ:
- **Սպեցիֆիկ արյան քաղցկեղներ** ՝ այս ցուցմանը վերաբերվող տեղեկություն այստեղ տեղադրված չէ :
-

Ինչպես ընդունել մաբթերան

Մաբթերան օգտագործվում է ներերակային ներարկման ճանապարհով:

Ինչպես և այլ դեղեր, մաբթերան կարող է առաջացնել կողմնակի ազդեցություն, սակայն ոչ բոլորի մոտ և հիմնականում ոչ ծանր:

- Եթե դուք ստանում եք մաբթերա այլ դեղերի հետ զուգորդված, կողմնակի ազդեցությունները հնարավոր է պայմնավորված լինեն այլ դեղերով նույնպես:
- Կողմանկի ազդեցության որոշ դեպքեր հնարվոր է լինեն ծանր և պահանջեն բուժում: Հազվադեպ դեպքեր կարող են լինել կյանքին սպառնացող:

Եթե որևէ կողմնակի ազդեցություն դառնում է ծանր, խնդրում եք անմիջապես դիմեք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը:
Եթե Դուք ունեք այլ հարցեր, դիմե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը:

Պահեք Ձեզ մոտ Ձեր բոլոր ընդունվող դեղերի ցանկը : Հնարավոր է այն պետք լինի ցույց տալ Ձեր բուժումը վարող մասնագետին :

Մինչև մաբթերա ստանալը

Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը, եթե ունեք ստորև բերված որևէ նշաններից մեկը:

Վարակներ

Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը, եթե

- ☐ Ներկա պահին ունեք վարակ (նույնիսկ թեթև մրսածության նման): Ձեր բժիշկը, դեղագետը կամ բուժքույրը հնարավոր է խորհուրդ տա հետաձգել մաբթերայի ներարկումը մինչև լիարժեք ապաքինումը
- ☐ Ունեք կամ ունեցել եք նախկինում շատ վարակներ
- ☐ Ունեցել եք կամ ունեք ծանր տուբերկուլոզ, արյան վարակ (սեպսիս) կամ որևէ այլ պատճառ, որը հնարավոր է ընկճի Ձեր իմունային համակարգը
- ☐ Ունեք այնպիսի խնդիր, որը կբարձրացնի վարակի հանդեպ Ձեր ընկալությունը, ինչը պետք կլինի բուժել

Այլ իրավիճակներ

Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը, եթե

- Ունեք սրտային հիվանդություններ
- Ունեք շնչառության հետ կապված խնդիրներ
- Հղի եք, կամ պատրաստվում եք հղիանալ, կամ կերակրում եք կրծքով
- Ունեք կամ երբևէ ունեցել եք վիրուսային հեպատիտ կամ լայրդի որևէ այլ հիվանդություն

- Ունեք, կամ ունեցել եք արյան կամ մեզի լաբորատոր հետազոտության տվյալների շեղումներ:

Դեղերի ընդունում

Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը, եթե

- ☐ Ընդունում եք արյան ճնշումը կարգավորող դեղեր
- ☐ Ստանում եք կամ երբևէ ստացելեք դեղերը, որոնք ազդում են իմունային համակարգի վրա՝ այսպես կոչված "իմունոսուպրեսանտներ" կամ քիմիաթերապևտիկ դեղեր: Այս դեղերը հնարավոր է ընկճեն Ձեր իմունային համակարգը:
- ☐ Ստացել եք քիմիաթերապևտիկ դեղեր, որոնք հնարավոր է ազդեն սրտի աշխատանքի վրա (կարդիոտոքսիկ քիմիաթերապիա)
- ☐ Ստացել եք կամ ներկա պահին ստանում եք որևէ այլ դեղ: Այստեղ ներառված են այն դեղերը, որոնք ձեռք են բերված դեղատնից, սուպերմարկետից կամ այլ բուժհաստատություններից:

Պատվաստումներ

Մինչև մաբթերայի ընդունումը տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը, եթե

- Կարծում եք, որ հնարավոր է պետք լինի պատվաստվել մոտակա ժամանակահատվածում, ներառյալ այնպիսի պատվաստումներ, որոնք անհրաժեշտ են այլ երկրներ ճանապարհորդելու համար:

  Որոշ պատվաստումներ չպետք է ներարկվեն մաբթերայի հետ զուգահեռ կամ մաբթերայի վերջին ներարկումից մի քանի ամիս անց: Ձեր բժիշկը մինչև մաբթերա նշանակելը պետք է ստուգի, կա արդյոք պատվաստում ստանալու անհրաժեշտություն:

Ասե՛ք Ձեր բժշկին, եթե վերևում թվարկածներից որևէ մեկը համապատասխանում է Ձեր կարգավիճակին: Եթե դուք վստահ չեք, որ կարող եք ստանալ մաբթերա, խոսեք դրա մասին նրա հետ:

Մաբթերայով բուժման ընթացքում կամ դրանից հետո

Մաբթերան ազդում է իմունային համաակարգի վրա և հնարավոր է Ձեզ դարձնի վարակի հանդեպ ավելի խոցելի: Որոշ վարակներ հնարավոր է լինեն ծանր և պահանջեն բուժում:

Վարակներ

Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը անմիջապես, եթե դուք ունեք ստորև ներկայացրած նշաններից որևէ մեկը.

- Մարմնի բարձր ջերմություն (տենդ) հարբուխի հետ կամ առանց հարբուխ

- Երկարատև հազ
- Մարմնի քաշի կորուստ
- Ցավ, առանց վնասվածքի
- Ընդհանուր վատ զգացողություն, հոգնածություն, կամ էներգիայի կորուստ
- Այրող ցավ միզելու ժամանակ

Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը անմիջապես, եթե դուք ունեք ներկայացրած վարակների նշաններից որևէ մեկը:

Ուղեղի լուրջ վարակ՝ պրոգրեսիվող մուլտիֆոկալ լեյկոէնցեֆալոպաթիա (ՊՄԼ)

Շատ հազվադեպ մաբթերան կարող է առաջացնել ուղեղի լուրջ վարակ, ասյպես կոչված պրոգրեսիվող մուլտիֆոկալ լեյկոէնցեֆալոպաթիա կամ ՊՄԼ: Այն կարող է բերել բավականին ծանր հաշմանդամության կամ լինել կյանքին սպառնացող:

PML-ը առաջացնում է վիրուսը: Հիմնականում առողջ մեծահասակների մոտ այս վիրուսը լինում է ինակտիվ և ոչ վնասակար: Հայտնի են այնպիսի դեպքեր, երբ այն դառնում է ակտիվ, և այդ դեպքերը կապված են իմունային համակարգի թուլացման հետ:

Անմիջապես տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը, եթե ունեք ստորև ներկայացրած PMLի նշաններից որևէ մեկը.

- ☐ Գիտակցության մթագնում, հիշողության կորուստ, մտածելու դժվարություններ
- ☐ Հավասարակշռության կորուստ կամ խոսելու կամ քայլելու խնդիրներ
- ☐ Մարմնի ուժի միակողմանի կորուստ կամ թուլություն
- ☐ Տեսողության վատացում կամ կորուստ

Անմիջապես տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը, եթե ունեք կամ ունեցել եք PMLի այս նշաններից որևէ մեկը մաբթերայի բուժման ժամանակ կամ եթե վերջին ներարկումից չի անցել 2 տարի:

© Copyright 2016
F. Hoffmann-La Roche Ltd
All reproduction and user rights for the logos, images and copy presented in this publication are the sole property of F. Hoffmann-La Roche Ltd, and may not be reproduced or transmitted in any form without the express written consent of F. Hoffmann-La Roche Ltd, Basel, Switzerland.

Եթե Ձեզ անհրաժեշտ է հավելյալ տեղեկություն կամ Դուք ունեք կողմնակի ազդեցության մասին ինֆորմացիա, դիմեք ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Է. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ և ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ- ի Դեղերի անվտանգության դիտարկման բաժին հետևյալ կոնտակտային տվյալներով.
Հասցե. ՀՀ, Երևան, Կոմիտասի փ. 49/4, 0051, հեռ. +37410231682 (ներք. 123),
թեժ գիծ. + 374 10 230 0505; է.հասցե. vigilance@pharm.am

Ինչպես նաև Գայանե Ղազարյանին, ՀՀ-ում Ռոշե դեղերի տեղային անվտանգության պատասխանատու. հեռ. +37491796688 / է.հասցե. gayaneh.ghazaryan@gmail.com

Կամ Նունե Կարապետյանին, ֆինանսական ղեկավար. Հեռ. +37491721154 / է.հասցե. nune.karapetyan.roche@gmail.com

Կամ ուղղել Ձեր հաղորդակցությունը Ռոշ Մոսկվա դեղերի անվտանգության բաժին. է.հասցե. moscow.ds@roche.com, բջջ. հեռ. +7-495-229 2999, ֆաքս: +7-495- 229 7999 կամ փորձեք կայք. www.roche.ru.
Կողմնակի ազդեցության վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Է. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ և ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կենտրոնի կայք հետևյալ հղումով. www.pharm.am:

Գայանե Ղազարյան _____ _____ 12.06.09
ամսաթիվ / ստորագրություն

Նունե Կարապետյան _____ _____ 12.06.19
ամսաթիվ / ստորագրություն